

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ

ՀԱՅԿ ՀԱՄԱՐԱԶՈՒՄՅԱՆ, Բ.Գ.Ք.

Մատենադարան, ԵՊՀ

«ՌՈՍՏԱՄ ՉԱԼ» ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՎԵՊԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՆ ՈՒ ԺԱՆՐԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Բանալի բառեր - Ռոստամ Չալ, Էպոս, վեպ, Սասնա ծռեր, հեքիաթ, Շահնամե, մատենագրություն, հայ վիպական ավանդություն

Ա.Վեպի գրառումն ու հրատարակությունը

Բանագիտական գրականության մեջ «Ռոստամ Չալ» ընդհանուր անունով կոչվող վիպական ստեղծագործության հայտնաբերումը, գրառումն ու հրատարակությունը, ինչպես հայ բանահյուսության ամենահայտնի ստեղծագործության՝ «Սասնա ծռեր» ազգային էպոսի դեպքում է, սկսվում է XIX-րդ դարի վերջին հայ իրականության մեջ բանավոր ավանդության նկատմամբ հետաքրքրության վերելքի շրջանում: Թեև հայ մատենագրության մեջ V դարից սկսյալ հիշատակվում են իրանական «Շահնամեից» ծանոթ կերպարներ ու մոտիվներ (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Գրիգոր Մագիստրոս, Կոստանդին Երզնկացի և այլք)², սակայն մեզ չի հասել այդ ստեղծագործության որևէ ծավալուն հատվածի գրառում, վերապատմում կամ մշակում:

Պահպանված փոքրաթիվ վկայություններից կարելի է ենթադրել, որ իրանական էպոսը հայտնի է եղել մեզանում, ընթերցվել է ու տարածվել:

* Ուսումնասիրությունն իրականացվել է «Հայ-իրանական «Ռոստամ Չալ» վեպը և հայ վիպական ավանդույթը» գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակում՝ Գիտության պետական կոմիտեի դրամաշնորհով: Ընդունված է տպագրության 15.11.2020 թ.:

2 Հայ մատենագրության մեջ «Շահնամեի» հիշատակությունների ու արձագանքների մասին տե՛ս Կ. Մելիք-Օհանջանյան, «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները Շահնամեում ու հայ մատենագրության մեջ», Ֆիրդուսի. բանաստեղծի ծննդյան 1000-ամյակին նվիրված ժողովածու, Երևան, 1934, էջ 1-116, Ավ. Շահունվարյան, Շահնամեն և հայկական աղբյուրները, Երևան, 1967, էջ 165-170:

X-XI դարի բանաստեղծ Ֆիրդուսու «Շահնամե» պոեմում Ռոստամը (Ռուստամ)՝ կենտրոնական հերոսներից մեկի՝ Չալի որդին է և իրանական էպոսի հիմնական թեմայի՝ Իրանի և Թուրանի միջև մղվող դարավոր կռիվների գլխավոր մասնակիցը: Ռոստամը, ապա և նրա որդին Չոհրաբը «Շահնամեի» գլխավոր հերոսներն են, իսկ նրանց՝ միմյանց չճանաչելու, մենամարտի և Չոհրաբի սպանության մոտիվներն ու պատմությունը՝ համաշխարհային էպիկական ժառանգության ամենահետաքրքիր, տպավորիչ ու ողբերգական դրվագներից: Ընդհանրապես «Շահնամեի» հարուստ ու գրավիչ աշխարհը, վիպական հերոսների սխրանքները ներկայացնող մոտիվաշարերը սիրվել են նաև իրանական միջավայրից դուրս և իրենց որոշակի արձագանքն են ունեցել տարածաշրջանում ապրող այլ ժողովուրդների վիպական ավանդույթներում:

Եվ պատահական չէ, որ իրանական այս հերոսի մասին պատմությունները տարածվել են քրդական բանահյուսության մեջ, և թերևս, նաև այդ ճանապարհով արտացոլվել հայ էպիկական ավանդության մեջ: Թեև չի կարելի բացառել նաև մինչֆիրդուսյան շրջանում իրանական բանավոր ու գրավոր ավանդույթում տարածված մոտիվների ու դիպաշարերի ավելի վաղ ներթափանցում ու տարածում հայ գրականության ու բանահյուսության մեջ: Կարելի է ենթադրել նաև, որ հայկական «Ռոստամ Չալը» կրել է XI-XII դարերին Ֆիրդուսու «Շահնամեի» ազդեցությամբ կազմված «Բարզունամե» և «Ֆերամորզնամե» պոեմների ազդեցությունը:

Սկսելով XIX դարավերջին ու շարունակվելով մինչև 1970-ական թվականների վերջերը, «Ռոստամ Չալ» վեպի գրառումները հայ իրականության մեջ անցել են երեք հիմնական շրջան.

- ա) 1880-1915 թթ.
- բ) 1932-1934 թթ.
- գ) 1972-1974 թթ.:

«Ռոստամ Չալի» գրառման այս փուլերը որոշակիորեն համընկնում են «Սասնա ծռեր» էպոսի գրառման ժամանակագրությանն ու առանձնահատկություններին, ինչը պատահական չէ, քանի որ երկու ստեղծագործություններն էլ ծագումով Արևմտյան Հայաստանից են,

պատումների գրառման XIX դարավերջի վերելքն ընդհատվել է Ցեղասպանությամբ ու ասացողական ավանդույթը կրողների արտագաղթով: Հաջորդ փուլում՝ խորհրդային առաջին շրջանում, գրառումների հնարավորություններ շատ քիչ են եղել, կամ այս ստեղծագործությունները քիչ են պատմվել: 1930-ականների սկզբին խորհրդային Միությունում ժողովրդական բանահյուսության, ի մասնավորի էպոսների նկատմամբ գաղափարախոսական-քաղաքական պատճառներով որոշակի հետաքրքրություն է առաջանում, սակայն այն շատ կարճ է տևում: Այս շրջանն ավարտվում է Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբով: Արդեն վերջին փուլում՝ 1970-ական թվականներին ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի նպատակային արշավախմբերը բանահյուսական այլ նյութերին զուգահեռ գրառել են նաև հայ-իրանական վեպի պատումներ:

«Ռոստամ Չալի» առաջին հրատարակված պատումի գրառման թիվը թեև հստակ չէ, սակայն այս վեպի հայտնաբերման պատիվը կրկին պատկանում է հայ բանագիտության ռահվիրա Գարեգին Սրվանձտյանցին: Նրա գրառած «Սալմանն ու Ռոստոմն» վերնագրված պատումը բանահյուսական այլ նյութերի հետ միասին ընդգրկված է «Համով-հոտով» ժողովածուի երկրորդ «Ճաշակում»՝ «Քանի մը հեքիաթներ» ընդհանուր խորագրի տակ¹:

Վեպի երկրորդ գրառման համար պարտական ենք մեր բանագիտության ևս մեկ նվիրյալի՝ բանահավաք, հայ միջնադարյան արվեստի հայտնի ուսումնասիրող, հետազայում Մեծի Տանն Կիլիկիո հայոց կաթողիկոս Գարեգին Հովսեփյանին: Նա 1890 թվականին Էջմիածնի ճեմարանում պաշտոնավարող մոկացի Եսվանից գրառում, ապա 1901 թվականին «Ազգագրական հանդեսում» հրատարակում է «Ռոստամ Չալ» անունով ծավալուն պատումը:

Նույն թվականին Փարիզում լույս է տեսնում Բագրատ Խալաթյանցի «Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ»² գիրքը: Այստեղ ներկայացվում է «Ռոստամ Չալի» հինգ նոր պատում, որոնք գրառվել են 1899-1900 թթ. Ապարանի ու Սուրմալուի շրջանների գյուղերում և Էջմիածնում: Այս պատումները որոշակիորեն ընդլայնում են վեպի կառուցվածքի ու կերպարային համակարգի մասին եղած պատկերացումները: Բացի այս, տարբերակներից մեկը ներկայացվում է քրդե-

1 Գ.Վարդ. Սրվանձտեանց, Համով-հոտով, Կ.Պոլիս, 1884, էջ 201:

2 Բ.Խալաթեանց, Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ, 1901, էջ 24-79:

րեն, զուգահեռ տրվում է նաև հայերեն թարգմանությունը: Զրդական պատումի հրատարակությունը փաստում է վեպի քրդական միջավայրում տարածվածությունը, միաժամանակ ցույց տալիս, որ քրդական տարբերակները հստակորեն տարբերվում են հայկականներից:

Տարբերակների հաջորդ խումբը ենթադրաբար 1900-ական թվականների սկզբին գրառել է վաստակաշատ բանահավաք ու ազգագրագետ Սարգիս Հայկունին: Թվով վեց պատումները՝ հիմնականում պատմված Մոկաց բարբառով, հրատարակվում են 1903 թվականին «Էմինյան ազգագրական ժողովածուում»¹: Այս տարբերակների ասացողները թեև հայեր են, սակայն գրառողի վկայությամբ, նրանք վեպը լսել են քրդերից, նույնիսկ զուգահեռ պատմել հայերեն և քրդերեն: Ուշագրավ է, որ գրառված պատումներից մեկի ասացողը՝ Սախուն, նաև «Սասնա ծռերի» մի տարբերակ է պատմել:

«Ռոստամ Չալի» տարածման աշխարհագրության առումով նորություն է բերում հաջորդ գրառումը: Մասնավորապես 1906 թվականին «Ազգագրական հանդեսում» Նոր Բայազետի գավառում գրառված այլ նյութերի հետ միասին լույս է տեսնում Երվանդ Լալայանի գրառած «Ռոստամ Չալ» անունով պատումը²: Բազմավաստակ բանահավաքի ու ազգագրագետի գրառած ևս մեկ պատում լույս է տեսնում ավելի ուշ՝ 1911 թվականին³: Վեպի այս՝ 1910 թվականին գրառված տարբերակը հրատարակվել է Վասպուրականում գրառված Եպիկական բանահյուսության այլ նմուշների, մասնավորապես «Սասնա ծռեր» Էպոսի երկու տարբերակների հետ միասին: Պատմողի մասին առանձին նշում չկա, բայց կարելի է ենթադրել, որ այստեղ կողք-կողքի հրատարակված՝ Էպոսի «Ռոստամայ տուն և Թյուլ-Դալիթ» ու «Ռոստամե Չալ» տարբերակների ասացողը նույն մարդն է՝ Հայոց Ձորի Քերծ գյուղացի Մանուկ Սարգսյանը:

«Ազգագրական ընկերության» և Երվանդ Լալայանի գործունեության հետ է կապված նաև այս շրջափուլում գրառված վերջին պատումը: 1915 թվականին Ալեքսանդրապոլում նարեցի ուսուցիչ Արտաշես Բարսեղյանը, որին Կ.Մելիք-Օհանջանյանը բնութագրում է որ-

1 Հայ-քրդական վեպեր /գրառ.Ս.Հայկունի, «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Ե, Էջմիածին, 1903, էջ՝ 3-70:

2 Ռոստամ Չալ (Նոր Բայազետի բարբառով), «Ազգագրական հանդես», № 14 (2), Թիֆլիս, 1906, էջ 69-85:

3 Ռոստամե Չալ, «Ազգագրական հանդես», № 21, Թիֆլիս, 1911, էջ 150-160:

պես «ազգագրագետ Երվ. Լալայանի ամենաեռանդուն օգնական»¹, Նարեկցի Պատուր Պողոսյանից գրառում է «Ռոստամ Չալ» անունով ծավալուն պատումը, որը լույս է տեսնում 1934 թվականին: Պատումի առաջաբանում Կ. Մելիք-Օհանջանյանը վկայում է, որ «Հայ ազգագրական ընկերության» գիտարշավի ընթացքում հազարից ավելի այլ նյութերի հետ միասին գրառվել է «Ռոստամ Չալի» յոթ պատումը²:

Արդեն խորհրդային իշխանության տարիներին՝ 1930-ականների սկզբներին սկսված բանահավաքչական գիտարշավների ու անհատական գործուղումների ընթացքում, ինչպես վկայում է Կ. Մելիք-Օհանջանյանը, գրառվում է «այս ժողովրդական վեպի 10-12 նոր պատումներ: Գրանցված նյութերի մեջ աչքի են ընկնում մանավանդ քուրդ-իրանական վեպի քրդական վերսիսները, որոնց մեծագույն մասը երգել կամ ասել են հնչուն ոտանավորով խորհրդային Հայաստանում ներկայումս հաստատված սասունցի, մոկացի, շատախցի և ուրիշ գավառների հայերը»³: Այսինքն՝ պատումների մեծ մասն, այդուհանդերձ, եղել է քրդերեն, թեև ասվել է հայերի կողմից:

Այս շրջանում գրառված պատումներից բանահավաք Հարություն Գիլանյանի՝ մոկացի Գրիգոր Մկրտչյանից 1932 թվականին գրառված «Ռոստամի խեքաթ» անունով պատումի ձեռագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում⁴:

Վիպական բանահյուսության նյութերի, նաև «Սասնա ծռեր» էպոսի ու «Ռոստամ Չալ» վեպի գրառման խորհրդային շրջանի վերջին փուլը՝ 1970-ական թվականներն են:

Տասնամյակների դադարից հետո գրառված ստեղծագործությունները փաստում են վիպասանական ավանդույթի կենսունակության մասին, սակայն ինչպես «Սասնա ծռերի» դեպքում է, տեսնում ենք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով պատումների փաստացի գեղարվեստական որակի որոշակի անկում: Մասնավորապես բանահավաք Ռոզա Գրիգորյանը 1973 և 1974 թթ. Մարտունիում ալաշկերտցի Գեղամ Ավետիսյանից ու Հայկազ Մկրտչյանից գրառում է

¹ Ֆիրդուսի. բանաստեղծի ծննդյան 1000-ամյակին նվիրված ժողովածու, Երևան, 1934, էջ 160:

² Նույն տեղում, էջ 159:

³ Նույն տեղում:

⁴ FAV: 8020,01-8043,00 համար: Առաջին անգամ հրատարակվել է՝ Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը գրքում (կազմողներ՝ Ս Հարությունյան, Է. Խեմյան, Մ. Խեմյան, Ա. Պողոսյան), Երևան, 2015, 117, էջ 277-281:

«Ռոստամ Զալի» երկու նոր պատում և դրանք հետագայում հրատարակում «Հայ ազգագրություն և բանահյուսություն» բազմահատորի Գեղարքունիքի ազգագրական շրջանին նվիրված գրքում¹:

Նույն 1970-ական թվականների սկզբին են գրառվում նաև դեռևս անտիպ, սակայն հրատարակության պատրաստված 9 պատում: Այդ պատումները գրառվել են ԳԱ Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից (խմբի ղեկավար՝ Սարգիս Հարությունյան, մասնակիցներ՝ Հայկ Ամայան, Չորայր Խալափյան, Վեներա (Արուսյակ) Սահակյան, Լուսիկ Մելիք-Օհանջանյան, Ստեփան Նադոյան) 1972-1973 թթ. Երևանում, Արագած, Երնջատափ, Փոքր Վեդի, Լանջադյուր, Ծաղկաշեն գյուղերում պատմական Հայաստանի տարբեր վայրերից սերող վիպասացներից:

Այս արշավախմբի ղեկավար, հայ բանագիտության երախտավոր ՀՀ ԳԱԹ թղթակից անդամ Ս. Հարությունյանի երազանքն էր հավաքել և մեկ գրքում հրատարակել «Ռոստամ Զալ» վեպի տպագիր ու անտիպ տարբերակները: Նրա նախաձեռնությամբ 2018 թվականին կազմվեց «Ռոստամ Զալի» ուսումնասիրության խումբը (ղեկ.՝ Հայկ Համբարձումյան, անդամներ՝ Սարգիս Հարությունյան, Նվարդ Վարդանյան, Աննա Պողոսյան: 2019 թ. Ս. Հարությունյանին փոխարինում է Տորք Դալայանը)², որն էլ ՀՀ Գիտության պետական կոմիտեի թեմատիկ ֆինանսավորմամբ սկսեց «Ռոստամ Զալի» նյութերի ուսումնասիրության ու հրատարակության պատրաստման աշխատանքները:

Այս աշխատանքի շրջանակում մեր նպատակային արշավախումբը, 2018 թ. (Հ. Համբարձումյան, Ս. Հարությունյան, Ն. Վարդանյան, Ա. Պողոսյան կազմով) և 2020 թ. (Հ. Համբարձումյան, Տ. Դալայան, Ն. Վարդանյան և Ա. Պողոսյան կազմով) Արագածոտնի ու Արմավիրի գյուղերում փնտրեց «Ռոստամ Զալի» նոր տարբերակներ, սակայն նոր պատումներ ցավոք չհայտնաբերվեցին:

Այդուհանդերձ, նախկինում տպագրված, նաև արխիվներում պահվող պատումները մեկ ծավալուն ժողովածու կազմելու հնարավորություն են տալիս, իսկ արդեն հրատարակված ժողովածուն

¹ Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 14 (Գեղարքունիք), Երևան, 1983, էջ 54-65:

² Թեմա՝ Հայ-իրանական «Ռոստամ Զալ» վեպը և հայ վիպական ավանդույթը: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթ-2018-2020:

էլ, համոզված ենք, որ կխթանի այս անչափ հետաքրքիր էպիկական ստեղծագործության հետագա ուսումնասիրությունը:

Բ.Պատումների տարածվածությունը

Ինչպես և «Սասնա ծռեր» էպոսը, «Ռոստամ Չալը» վեպը նույնպես գրառվել է առավելապես Արևելյան Հայաստանում, սակայն կրկին, մեծ մասամբ ծագումով արևմտահայ վիպասացներից: Այս փաստը ենթադրել է տալիս, որ այս ստեղծագործության հայրենիքը Արևմտյան Հայաստանն է: Այս ժողովածուի պատումների գերակշիռ մասի վիպասացները վեպը լսել են հայրենիքում, և մեծ մասամբ ծագումով Վասպուրականի գավառների գյուղերից են: Եղած նյութը հաշվի առնելով՝ կարելի է մեծ վստահությամբ ասել, որ «Ռոստամ Չալի» «հայրենիքը» Վասպուրականն է, ավելի մասնավոր՝ Ռշտունիքը: Այս ենթադրությունը փաստվում է նաև նրանով, որ հենց այս տարածաշրջանում է շատ եղել քրդերի թիվը, իսկ, ըստ եղած վկայությունների, այս վեպը տարածված է եղել քրդական միջավայրում, ասվել քրդերեն: Իսկ թե ինչպես է վեպը տարածվել և հասել Ալաշկերտ, Սուրմալու, Ապարան, Նոր Բայազետ ու Երևան, կփորձենք ճշտել եղած վկայություններով:

Ցավոք, վիպասացների ու պատումների գրառման հանգամանքների մասին սակավ տեղեկություններ են պահպանվել, հետևաբար դժվար է պատասխանել բանահավաքչական ավանդական ու կարևոր հարցերի. ումի՞ց է լսել վիպասացը, որտե՞ղ, արդյո՞ք վեպը տարածված է եղել, ո՞ր միջավայրերում է ասվել, ի՞նչ արձագանք ունեցել: Եղած տվյալները համադրելով՝ կարող ենք ասել, որ «Ռոստամ Չալը» տարածվել է առավելապես ընտանիքում՝ հորից որդի, կամ պապից-թոռ: Նաև մեծ մասամբ եղել են պատահական փոխանցումներ, հատկապես արհեստավորական միջավայրում: Գալով վեպի տարածման ուղղություններին՝ պայմանականորեն կարելի է առանձնացնել երկու հիմնական ուղղություն՝

ա) Վասպուրականի գավառներ (Ռշտունիք, Հայոց Ձոր) - Էջմիածին - Ալեքսանդրապոլ - Սուրմալու - Նոր Բայազետ բ) Ալաշկերտ - Ապարան - Մարտունի

ա) Բանահավաք Սարգիս Հայկունին վկայում է, որ «Ռոստամ Չալը» հավասարապես տարածված էր Վան-Վասպուրականի քրդերի և

հայերի միջավայրում: Սարգիս Հայկունու գրառած տարբերակների վիպասացները մոկացի են՝ Նորտուգի Տիմ, Սիքունս, Քաջբերունյաց Արծկեի Առնճկոյս, Գինեկաց գյուղերից:

Բանահավաքի դիտարկմամբ, սա քրդական վեպ է, սակայն սիրվել ու հաճախ պատմվել է հատկապես հայերի կողմից. «Ընդհանրապես հայեր օթախներու մէջ կը պատմեն, որպէս եւ բազմաթիւ քրդական վեպեր: Թէեւ քրդական վեպ է, քրդեր այնչափ չեն հետեւիր, այլ ընդհանրապես հայեր եւ քուրդ քնչուներն են կը պատմեն»:¹ Կարելի է ենթադրել, որը քրդերն ավելի շատ պատմել են տարբեր սիրավեպեր, իսկ դյուցազնական պատմություններով հետաքրքրվել են հայերը: Մեր այս ենթադրությունը փաստվում է նաև նրանով, որ «Ռոստամ Զալը» մեծ մասամբ ներկայացվել է «Սասնա ծռեր» ազգային էպոսի հետ միասին՝ Նույն վիպասացների կողմից, որոնք երկու ստեղծագործություններն էլ լավ են իմացել:

Պատումների մյուս ծավալուն խմբի գրառող Բագրատ Խալաթյանցի վկայությամբ վեպը տարածված է եղել Ապարանի ու Կողբի (Սուրմալու) շրջանի գյուղերում. «Մանաւանդ տարածւած են այստեղ աւանդութիւններ ժողովրդի սիրած հերոսների՝ Դաւթի եւ Սիւրի եւ Պարսից «փահլէւանների» մասին»:² Անկախ անբարենպաստ քաղաքական ու սոցիալական պայմաններից, ըստ բանահավաքի՝ այս շրջաններում ծաղկում էր բանահյուսությունը: Ժողովուրդը ձմեռային երեկոներին հավաքվում էր օդաներում, հիշում և պատմում էր հորից, պապից լսածը կամ որևէ հայտնի «նաղլ ասողի» պատմածը: Բացի այս, բանահավաքն ավելացնում է. «Գրեթէ ամեն մի գիւղ ունի իւր «ասողը», որ շնորհիւ իւր գիտութեան առանձին յարգանք է վայելում բոլորից, իսկ աւելի հռչակաւորը՝ ամբողջ գաւառում: Բացի այդ, տարին մի անգամ այս կողմերն են գալիս մոկացիներ եւ մշեցիներ «քէչայ գործելու» կամ «բուրդ գգելու» եւ այս պարապմունքի ժամանակ իրենց երկրի «նաղլները» ասում հետաքրքիր գիւղացի ամբոխին»:³

Այսինքն՝ տեսնում ենք վիպասացական կենսունակ միջավայր՝ գյուղական ու գավառական մասշտաբով հայտնի վիպասացներով, վեպի՝ հորից որդի փոխանցմամբ, նաև, ինչը շատ ուշագրավ է՝ Արևմտյան Հայաստանի հետ ամեն տարի Նորոգվող կապերով: Կր-

1 Հայ-քրդական վեպեր, էջ 25:

2 Բ. Խալաթյանց, Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ, Փարիզ, 1901, էջ 7:

3 Նույն տեղում:

կին ինչպես «Սասնա ծռերի» դեպքում է՝ վեպերը տարածվում են արհեստավոր մոկացիների ու մշեցիների միջոցով նաև:

Վեպի՝ արհեստավորների միջավայրում տարածվածության ու «Սասնա ծռերի» հետ կապի այլ վկայություններ ևս կան: Այսպես Բ. Խալաթյանցի գրառած մեկ այլ պատումի ասացող՝ Գրիգոր Խաչատրյանը, պատմել է նաև «Սասնա ծռերը», իսկ «Ռոստամ Չալը» լսել է հոռոմցի (Ալեքսանդրապոլի գավառ) մի երկաթագործից¹: Այս տեղեկությունը ենթադրել է տալիս, որ «Ռոստամ Չալը» տարածված է եղել նաև Ալեքսանդրապոլի գավառում: Ալեքսանդրապոլում է գրառվել նաև մեկ այլ՝ Պատուր Պողոսյանի պատումը 1915-ին, սակայն ասացողը նարեկցի է՝ Ռշտունիքից, և վեպը լսել է նարեկցի մեկ այլ վիպասացից:

Նորից նույն տարածաշրջանից, սակայն Վանա լճի հարավ-արևելյան ափերից՝ Հայոց Ձորի Զերծ գյուղացի է Ե. Լալայանի գրառած պատումներից մեկի վիպասանը, որը սակայն հաստատվել է Նոր Բայազետում: Այսինքն՝ տեսնում ենք վեպի տարածման մեկ այլ ենթաուղղություն՝ Հայոց Ձոր - Նոր Բայազետ: Հայոց Ձորում «Ռոստամ Չալի» տարածվածության ու սիրված լինելու մասին վկայում է 1970-ական թվականներին գրառված անտիպ պատումներից մեկի ասացող Մելիք Անտոնյանը: Ըստ վիպասացի, «Հայոց Ձորում քառասուն ջրաղաց է եղել, որոնք մի ջրով են աշխատել. դրանք կոչվել են Ռըստոմի ջրաղացներ: Այդ ջրաղացները Ռըստոմը նվիրել է հորեղբորն ու նրա 40 զավակներին ու թոռներին»: Այսինքն՝ վեպը որոշակիորեն տեղայնացել է այս գավառում՝ կապվելով կոնկրետ վայրերի հետ՝ վերածվելով ավանդության: Այս երևույթը վեպի տեղայնացման ընդունված դրսևորում է և բազում օրինակներով հանդիպում է նաև «Սասնա ծռեր» էպոսի հետ կապված:

բ) Վեպի տարածման մեկ այլ ուղղություն է Ալաշկերտ - Ապարան - Մարտունի գիծը: Այսպես, Ապարանի Չամբուլ գյուղացի Մուրադ Մխիթարյանը, իր տարբերակը լսել է հորից՝ ալաշկերտցի Յոնջալու գյուղացի Մխիթարից, որը իմացել է նաև «Սասնա ծռերը»: Ալաշկերտի Մանգասար գյուղացի է նաև Ռ. Գրիգորյանի՝ Մարտունիում գրառած պատումի վիպասաց Գեղամ Ավետիսյանը: Ապարանի Երնջատափ գյուղում գրառված պատումներից մեկի ասացողը՝ Բաղդասար

¹ Նույն տեղում, էջ 57:

Գրիգորյանը, Նշում է, որ իր համագյուղացի ուսուցիչ Սարգսի Նախնիները գաղթել են Դիադինից (Էրզրումի վիլայեթ): Իհարկե հստակ չէ, թե Սարգիսը Դիադինում է սովորել «Ռոստամ Չալը», թե՞ Ապարանում, սակայն չի կարելի բացառել վեպի շրջանառությունը նաև այս վայրերում: Բ. Խալաթեանցի գրառած մեկ այլ պատումի վիպասաց Բարսեղ Հարությունյանի առիթով բանահավաքը գրում է. «Բուրզեի գրոյցն նա լսել է հարեւան Ղարաբուլաղ գիւղի բնակչից»¹: Այսինքն՝ վեպը Ապարանի գյուղերում բավական տարածված է եղել:

«Ռոստամ Չալի» վիպասացման ընթացքի ու տարածվածության վերաբերյալ Նյութերի սակավությունն իհարկե միայն պայմանականորեն է թույլ տալիս հասկանալ վեպի տարածման աշխարհագրությունը, տեղայնացման առանձնահատկությունները: Սակայն ակնհայտ է, որ այն տարածված է եղել հատկապես Վանա լճի հարավային և հարավ արևելյան ափերին՝ քրդաբնակ շրջաններում, ապա այստեղից անցել Արևելյան Հայաստան՝ մինչև Ցեղասպանությունը՝ հիմնականում արհեստավորների միջոցով, Ցեղասպանությունից հետո՝ գաղթականության: Արևելյան Հայաստանում վեպը հաճախ չի պատմվել և չի տեղայնացել:

Գ.Վեպի ուսումնասիրությունը. «Շահնամեի» և «Սասնա ծռերի» միջև

«Ռոստամ Չալ» վեպի ուսումնասիրությունը սկսվում է գրառված ու հրատարակված երկրորդ ու երրորդ պատումներին կից հետազոտություններով, հետազայում որոշակիորեն շարունակվում խորհրդային շրջանում: Սակայն այն այդպես էլ չի ստանում համակարգված բնույթ: Հիմնական պատճառը թերևս այն է, որ այս վեպը չի համարվել ու համարվում ինքնուրույն ստեղծագործություն: Ի տարբերություն «Սասնա ծռերի», այն գրեթե զուրկ է ազգային ինքնատիպությունից, բնավորությունից, տեղային առանձնահատկություններից: Կարևոր է նաև, որ վեպը նույնիսկ գիտական շրջանակներում ճանաչված չէ. մինչև այս հրատարակությունը «Ռոստամ Չալը» չի ունեցել ամբողջական, գոնե մեկ տասնյակ պատումներ ընդգրկող հրատարակություն, որը կարող էր խթանել այս ստեղծագործության հետազոտությանը:

Այդուհանդերձ, «Ռոստամ Չալի» առաջին իսկ ուսումնասիրությամբ

¹ Բ. Խալաթեանց, Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ, էջ 24:

յունները՝ Բ. Խալաթյանցի «Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ» գիրքն ու Գ. Հովսեփյանի ակնարկը առանձնացնում ու քննում են այս վեպի ուսումնասիրության հետ կապված հիմնական խնդիրները.

- Ի՞նչ ծագում ունի այն. բնի՞կ է, թե՞ փոխառություն:
- Փոխանցվել է գրական, թե՞ բանավոր ճանապարհով և ե՞րբ:
- Առանց միջնորդի՞, թե՞ քրդական բանահյուսության միջնորդությամբ:

• Ինչպիսի՞ հարաբերություն ունի Ֆիրդուսու «Շահնամեի» հետ:

• Ինչպիսի՞ հարաբերություն մինչֆիրդուսյան շրջանի պարսկական աղբյուրների հետ:

• Ինչպիսի՞ հարաբերություն «Սասնա ծռեր» էպոսի, ընդհանրապես հայ վիպական ավանդության հետ:

Բ. Խալաթյանցը, Գ. Հովսեփյանը, փոքր-ինչ ուշ նաև Ս. Հայկունին՝ առաջնորդվելով բանագիտության փոխառությունների դպրոցի սկզբունքներով, գրառված նյութի փաստացի որակով ու վեպի շրջանառության հանգամանքներով, վեպը համարում են փոխառություն, ինչն ըստ նրանց պայմանավորված է պարսկական քաղաքական-մշակութային նաև ավելի ուշ շրջանի քրդական միջավայրի ու բանահյուսության ազդեցությամբ: Ուսումնասիրողները պարսկական գրականության ու բանահյուսության այդ ազդեցության քննությունը սկսում են հայ մատենագրության մեջ պարսկական առասպելների ու «Շահնամեի» մոտիվների քննությամբ, ինչը թեև տրամաբանական, սակայն «Ռոստամ Չալի» ուսումնասիրության այդքան էլ արդյունավետ ճանապարհ չէ, քանի որ այլ բան է պատմիչների երկերում առկա, գրավոր աղբյուրներից փոխանցված տեղեկությունները և այլ՝ XIX դարավերջին անգրագետ միջավայրում տարածվող էպիկական պատումը: Մյուս կողմից, «Ռոստամ Չալ» վեպի հիմնական մոտիվներն ու գեղարվեստական այլ միջոցներ հստակորեն տարբերվում են Ֆիրդուսու «Շահնամեից» և շատ ավելի մոտ են հայկական վիպական ավանդույթին, մասնավորապես՝ «Սասնա ծռեր» էպոսին: Սա է պատճառը, որ այս վեպի գրեթե բոլոր ուսումնասիրողները մեծ ուշադրություն են դարձնում մեր ազգային էպոսի հետ համեմատությանը: Այս դեպքում

հիմնական խնդիր է դառնում փոխառության ուղղությունը. «Ռոստամ Չալն» ազդվել է «Սասնա ծռերի»¹, թե՛ ընդհակառակը:

Այսպես, Բ.Խալաթյանը՝ հիմնվելով իր գրառած տարբերակներում առկա մեր Էպոսի անունների, մոտիվների վրա, առաջ է քաշում այն տեսակետը, որ պարսկական վեպի մեծ ազդեցությամբ պարսից դյուցազունները, սիրվել են «կազմելով մի ցեղ Նորա ազգային հերոսների հետ միասին»²: Այսինքն՝ վիպասացները միացրել են տարբեր Էպոսները, հերոսներին դրել ազգակցական կապերի մեջ: Այս տեսակետն իհարկե տրամաբանական է և ընդունելի, սակայն շարունակության մեջ ուսումնասիրողը Նշում է՝ «Առաջ տանելով համեմատությունը, կ'տեսնենք, որ հայ դիւցազների վերայ դրոշմել են պարսից փառլեանների յատկութիւններն, եւ նախ եւ առաջ Միերի նկատմամբ, որի անձնաւորութիւնն եւ հերոսագործութիւններն մօտ յիշեցնում են Բուրգէին»²: Որպես օրինակ Բ.Խալաթյանը բերում է մի շարք նմանատիպ մոտիվներ (հանդիպում պառավի հետ, քաղաքների ավիրում, հորի մեջ մնալ, թշնամուն կիսել, որսորդություն և այլն), որոնք իրականում ընդհանուր էպիկական բնույթ ունեն և հանդիպում են ոչ միայն մեր Էպոսի տարբեր հերոսների հետ կապված, այլև ամենատարբեր բանավոր ու միջնադարյան գրական ավանդույթներում: Նույն տեղում ուսումնասիրողը հիշում է նաև բաբելոնական Իշտարի ու Իզդուբարի առասպելը, այս դեպքում էլ ընդգծելով նաև այդ հնագույն բնագրի ազդեցությունը: Իհարկե, ուսումնասիրողի այս դատողությունները պայմանավորված են բանագիտական գերիշխող մեթոդով, հայ վիպական ավանդույթի ուսումնասիրության մակարդակով, նաև ավելի ուսումնասիրված ու հին համարվող միջագետքյան ու պարսկական առասպելաբանության հայտնիությամբ: Ազդեցության ու փոխառությունների հարցերը մինչ օրս էլ լայնորեն քննարկվում են հայ բանագիտության մեջ՝ կապված մեր վիպական այլ ստեղծագործությունների, մասնավորապես՝ «Սասնա ծռերի» հետ:

Ծայրահեղությունների մեջ չընկնելու համար անհրաժեշտ է հասկանալ ու տարբերակել կրկնվող ընդհանուր, նման, բայց գուցե մեկը մյուսից անկախ ստեղծված սյուժեներն ու մոտիվները և ամբողջական ստեղծագործությունները: Նույնիսկ այն դեպքում, երբ այս կամ այն հերոսի անունն ու մոտիվները կրկնվում են, պետք է հաշվի առ-

¹ Բ. Խալաթյանը, Նշվ. ուսումն., էջ 10:

² Նույն տեղում:

Նեյ, որ բանահյուսական էպիկական մեծ ծավալի ստեղծագործությունները ձևավորվում են ամենատարբեր միջոցներով առաջին հերթին տեղային էպիկական ավանդույթի մեխանիզմներով ու գեղարվեստական միջոցների «շտեմարանների» օգտագործմամբ: Այսինքն՝ եթե ինչ-որ ժամանակ «Ռոստամ Զալը» կապ է ունեցել պարսկական վիպական ավանդույթի կամ «Շահնամեի» հետ, ապա գրառման ժամանակ հայկական վիպական ավանդության հետ փոխադրեցությունների արդյունքում այն այնքան փոփոխված ու տեղայնացված է եղել, որ դժվար է փոխառություն համարել:

Հայ-իրանական վեպի նյութի անբավարարությունը թերևս թույլ չի տվել Բ.Խալաթյանցին ավելի խորն ու ընդգրկուն ուսումնասիրություն կատարելու, քանի որ նա ավելի շատ կանգ է առնում պարսկական առասպելների ստեղծման, ապա նաև Ֆիրդուսու «Շահնամեի» կազմության պատմական-մշակութային համատեքստի ներկայացման վրա, քան գրառված պատումների ուսումնասիրության:

Գարեգին Հովսեփյանը, շարունակելով պարսից և հայ հերոսների «ազգակցության» թեման, ենթադրում է, որ այն «հնության կնիք է կրում»¹: Ուսումնասիրողը՝ խոսելով Խալաթյանցի գրառած պատումների մասին, եզրակացնում է, որ «պարսից վեպի հերոսները հայացած են և ազգակցական նեղ կապերով միացած մեր ազգային վեպի հերոսների հետ», ապա բերելով ռուս գրականության մեջ «Շահնամեից» ազդեցության օրինակներ, եզրակացնում «Այսպիսի մի փոխառություն է Շահ-Նամեից՝ նաև մեր գրի առած Ռոստամ-Զալը»²: Ուսումնասիրողը դժվարանում է հստակ ներկայացնել փոխանցման ընթացքը, ենթադրում, որ գուցե հայերը քրդերից են լսել և յուրացրել. «Ինչպես և իցէ, ժողովուրդը իւրացնելով Շահ-Նամեի որոշ մասերի բովանդակութիւնն, ինքն է հիւսել, մի նոր վեպ է կազմել»³, սակայն սա չի կարելի ասել «Ռոստամ Զալի» այն հատվածների մասին, որոնք հստակորեն տարբերվում են «Շահնամեից»: Ըստ այդմ էլ՝ փոխառությունն ըստ հայագետի կատարվել է «միայն էական, բուն վիպական մասերով, յաճախ աղբյուրի պատմածքից տարբեր կազմութեամբ, հայեացքներով և շարայարութեամբ»⁴:

1 Գ. վարդ. Յովսեփեան, Ռոստամ Զալ ժողովրդական վեպ, Ազգագրական հանդես, էջ 6:

2 Նույն տեղում, էջ 7-8:

3 Նույն տեղում, էջ 9:

4 Նույն տեղում:

Այսինքն՝ ի տարբերություն Բ. Խալաթյանցի, Գ. Հովսեփյանը տարբերակում է վիպական առանձին մոտիվներն ու բնագրի հետագա բանավոր շրջանառության ու տեղական ավանդության հետ փոխադրեցությամբ առաջացած տարբերակները:

Ուսումնասիրողը հրավիրում է ընթերցողի ուշադրությունն այն կարևոր խնդրին, որ Ֆիրդուսու գործը որքան էլ հիմնված լինի բանահյուսական նյութի վրա, գրական ստեղծագործություն է, հստակորեն տարբերվում է թե՛ իր բանահյուսական նախատիպերից և թե՛ հետագա շրջանի վերապատում-տարբերակներից: Ըստ այդմ էլ՝ «Ռոստամ Զալը» կարելի է համարել ընդհանուր առմամբ ինքնուրույն, ժողովրդի կողմից իր «հոգու պահանջներին համապատասխան չափերով» յուրացված ստեղծագործություն: «Հայ ժողովրդի երևակայութիւնն ու ստեղծագործող հոգին իւր դրոշմն է կնքել ծագումով օտար այս վէպի վերայ. նա ստեղծել է այն կենդանի, հակիրճ, բայց զօրաւոր արտայայտութիւններով վիպական լեզուն, որ հրճուանք կարող է պատճառել... Լեզուի կենդանութեան, պատկերաւոր արտայայտութիւնների, բուն վիպական նկարագրութիւնների և ժողովրդական հայեացքների արտայայտութեան կողմից մեր ազգային բանահիւսութեան գեղեցիկ ստեղծագործութիւններից մէկը պիտի համարել այս վէպը, թէև կմախքն օտարին է»¹, - եզրակացնում է ուսումնասիրողը:

Ամբողջացնելով վերոգրյալը, կարող ենք ասել, որ հայ-իրանական կամ հայ-քրդական այս վէպը եթե նույնիսկ ընդունում ենք որպես փոխառություն, այդ փոխառությունը չի վերաբերում բոլոր մեզ հասած տարբերակներին, չի վերաբերում բոլոր հատվածներին: Ըստ մեզ, ամբողջության մեջ՝ հաշվի առնելով վէպի տարածվածությունը, վիպասացների ու միջավայրի վերաբերմունքը, կարող ենք այն ինքնուրույն ստեղծագործություն համարել՝ ստեղծված հայկական վիպական ավանդության գեղարվեստական միջոցներով ու մեխանիզմներով: Այս պարագայում հստակ չէ՝ հայե՞րն են քրդերից վերցրել, թե՞ քրդերը հայերից, քանի որ այդ փոխառությունները կարող էին եղած լինել քրդերի Արևմտյան Հայաստանում հաստատումից շատ ավելի վաղ՝ կատարված ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ճանապարհով:

Գարեգին Հովսեփյանի այս սթափ ու գիտականորեն հիմնավոր տեսակետը գերիշխում է հետագա ուսումնասիրություններում ու

¹ Նույն տեղում, էջ 10:

անդրադարձներում, մասնավորապես՝ խորհրդային շրջանում, երբ «Ռոստամ Զալի» նկատմամբ որոշակի հետաքրքրություն է առաջանում 1934 թվականին՝ կապված Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակի տոնակատարությունների հետ: Երևանում հրատարակվում է իրանցի մեծ բանաստեղծին նվիրված գիտական ուսումնասիրությունների ժողովածու: Մեր ուսումնասիրության տեսանկյունից կարևոր են այս ժողովածուում ընդգրկված Կ. Մելիք-Օհանջանյանի «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները Շահնամեում ու հայ մատենագրության մեջ»¹ ծավալուն ուսումնասիրությունն ու ժողովածուում ներառված՝ Ա.Բարսեղյանի գրառած «Ռոստամ-Զալ» պատումի առաջաբանն ու բառարանը²:

Իր ուսումնասիրության մեջ վաստակաշատ հայագետը մանրամասն քննում է Ֆիրդուսու կյանքի ու ստեղծագործության ժամանակը, Իրանի հասարակական-տնտեսական-քաղաքական պայմանները, «Շահնամեի» գրավոր աղբյուրներն ու դրանց հնարավոր արձագանքները հայ մատենագրության մեջ: Ամբողջացնելով նախորդ ուսումնասիրությունների արդյունքները՝ Կ.Մելիք-Օհանջանյանը մանրամասն քննում է պարսկական վիպական ու առասպելական մոտիվների իրացումները Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի պատմություններում, ինչպես նաև անդրադառնում «Շահնամեի» արվեստի որոշ հարցերի: Արժարժվող թեմաներից մեզ համար կարևոր են հատկապես հայ մատենագրության մեջ «Շահնամեի» գրավոր աղբյուրների իրացվող մոտիվները, քանի որ դրանք հետագայում հայ պատմիչների գործերից կարող էին անցնել բանավոր ավանդության: Կ.Մելիք-Օհանջանյանը հատկապես կանգ է առնում «Շահնամեի» հիմնական աղբյուրների՝ «Կարնամակ» և «Յատկարի Զարիրան» ժողովածուների մոտիվների քննության վրա: Ըստ ուսումնասիրողի, այս ժողովածուներից շատ մոտիվներ գրավոր և բանավոր ճանապարհներով ներմուծվել են մեր պատմիչների երկեր կամ նրանց բանահյուսական աղբյուրներ: Ընդ որում, դրանց մի մասն ընդհանուր թափառիկ մոտիվներ են, մյուսը՝ խառը³: Կ. Մելիք-Օհանջանյանը իրանական մոտիվների զուգահեռներ գտնում է

1 Կ.Մելիք-Օհանջանյան, «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները Շահնամեում ու հայ մատենագրության մեջ», Ֆիրդուսի. Բանաստեղծի ծննդյան 1000-ամյակին նվիրված ժողովածու, Երևան, 1934, էջ 1-116:

2 Նույն տեղում էջ 159-166: Բառարան, էջ 223-230:

3 Նույն տեղում, էջ 51:

Ազգաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի պատմությունների վիպական հատվածներում և մեր Նոր վեպում «Սասնա ծռերում»: Օրինակ՝ Ազգաթանգեղոսի ներկայացրած Խոսրովի ու Անակի բախումն ու Նրանց զավակների ճակատագիրը, որը համարվում է «Պարսից պատերազմ» ավանդավեպի սկիզբը և ներկայացվում Ազգաթանգեղոսի հունարեն բնագրի սկզբում, համեմատելի է «Կարնամակի» ու Ֆիրդուսու «Արտաշիրի ու Արտավանի», Կարենյան Պահլավի և այլ զրույցների հետ: Որոշ միջադեպերով նաև Դավթի ու Մելիքի հարաբերությունների մոտիվների հետ: Նաև համեմատելի են Արտաշիրի կռիվը և Սանասարի կռիվը վիշապի դեմ, պարսկական հերոսների ամուսնությունները և Սասունցի Դավթի հետ կապված համապատասխան մոտիվները: Առանձնացվում է նաև Դավթի՝ Մելիքի արքունիքում անցկացված շրջանի նմանությունը Արտաշիրի վեպի նմանօրինակ մոտիվների հետ և այլն:

Կ. Մելիք-Օհանջանյանը այս մոտիվները համարում է հայ-իրանական դարավոր մշակութային շփումների արտահայտություն, ինչով էլ միաժամանակ բացատրում է, թե ինչով են «Ռոստամ Չափ» մոտիվները տարբերվում Ֆիրդուսու «Շահնամեի» մոտիվաշարից. «Իրանի առասպելական ու վիպական մոտիվների մի խոշոր մասն էլ Ֆիրդուսուց, անգամ «Կարնամակից» շատ առաջ բանավոր ճանապարհով մուտք են գործել Հայաստան, ընդունելություն գտել հայերի, սկզբում գլխավորապես ազնվական դասի, ապա և վեպ ու առասպելով, զրույց ու հեքիաթով երկար դարեր սևվող գյուղացիության կողմից, սիրվել, հարագատացել և միացել հայկական վեպերին ու վերածվել Նոր որակի: Վեպն այսպիսի մի կենդանի ստեղծագործական պրոցես ապրելով՝ կատարելապես ազգայնացել է: Դժվար է ասել, թե ո՞ր մոտիվն է իրանական կամ ո՞րը՝ զուտ հայկական: Այս դեպքում կարող է խոսք լինել միայն Նրանց նմանությունների ու զուգահեռների մասին»¹, իրավացիորեն եզրակացնում է Կ. Մելիք-Օհանջանյանը:

«Ռոստամ Չափ» վեպի ուսումնասիրության տեսանկյունից այս քննությունը կարևոր է, քանի որ, ինչպես տեսանք, XIX-XX դարերի հայ վիպասացները երկու վեպերն էլ իմացել են և մոտիվների նմանությունները կարող էին գալ ոչ միայն ավելի ուշ՝ քրդերի հետ շփումներից, այլ նաև շատ ավելի վաղ՝ գրավոր աղբյուրներից («Կարնամակ», «Յատկարի Չարիրան» և այլն) մտնել հայ պատմիչների երկեր, նաև

¹ Նույն տեղում, էջ 79:

բանավոր ավանդույթ և այդպես հարատևել մինչև XIX դարի վերջ: Այս դեպքում հավանական է թվում «Ռոստամ Չալի» ամբողջական կամ առանձին մոտիվների փոխանցումը՝ հայ ավանդույթից՝ քրդականին:

Այս առումով Կ. Մելիք-Օհանջանյանի տեսակետը հավասարակշիռ է: Նա նկատում է, որ քրդերն ու հայերը հավասարապես օգտվել են միմյանց վիպական ստեղծագործություններից. հայ վիպասացը «որդեգրում է պապերից ժառանգություն ստացած Իրանի վիպաշխարհի մոտիվները, քուրդ մասսայի միջոցով թարմացնում ու լրացնում է Իրանի և քրդերի վեպերն ու առասպելներն նորանոր էպիզոդներով և կոնսիմիլացիայի կարգով՝ փոխառնում ու վերամշակում է հայ հին ու նոր ժողովրդական վեպերն ու առասպելները»¹: Իսկ քրդերն էլ իրենց հերթին յուրացրել են «Սասնա ծռերը» և Սասունցի Դավթին քուրդ են համարում. «Քուրդ վերսիայում էլ տեղի է ունենում նույն տեղայնացման ու ազգայնացման պրոցեսը»:²

Արդեն «Ֆիրդուսի» ժողովածուում հրատարակվող պատումի առաջաբանում հայագետը ի թիվս վերոգրյալի առանձնացնում է «Ռոստամ Չալի» ու «Շահնամեի» ևս մեկ տարբերություն. հայկական ավանդությունը սկսվել է ոչ միայն Ֆիրդուսուց առաջ եղած աղբյուրներից, այլ նաև հետո: Մասնավորապես, XI-XII դարերում կազմված «Բարզու-Նամե» և «Ֆիրմուրզ-Նամե» պոեմներից: Այստեղ հատկապես նման են հերոսների անունները, պատմական համատեքստը՝ Իրանի և Թուրանի հակամարտությունը³: Սա վերաբերում է ի մասնավորի Չոհրաբի որդի Բուրզի մասին պատմող պատումներին ու հատվածներին:

Այս ամենով հանդերձ, իմանալով պարսկական վիպական ավանդույթի ու «Շահնամեի» ընդհանրություններն ու տարբերությունները, ինչպես և «Սասնա ծռերի» դեպքում է, անպատասխան է մնում գլխավոր հարցը. ե՞րբ է կազմավորվել վեպը: Առանձին ընդհանուր մոտիվները, գեղարվեստական արտահայտության նման միջոցները, սակայն, չեն նույնանում ամբողջական վեպի հետ: Եթե «Ռոստամ Չալը», այդուհանդերձ, ինքնուրույն ստեղծագործություն է, այն պետք է իր ձևավորման կամ կազմավորման ինչ-որ շրջան ունենա: Այս հար-

1 Նույն տեղում, էջ 114:

2 Նույն տեղում էջ 116:

3 Նույն տեղում, էջ 162:

ցին շատ դժվար է պատասխանել և վերևում ներկայացված ուսումնասիրություններում մենք այդ պատասխանը չենք գտնում, քանի որ, ինչպես տեսանք «Ռոստամ Չալ» վեպի՝ որպես առանձին ինքնուրույն ստեղծագործության մասին, մինչ XIX դարավերջ ոչ մի վկայություն չունենք: Եղած փաստերը միայն վերաբերում են առանձին մոտիվների կիրառություններին, կերպարների ու «Շահնամեի» հիշատակություններին:

Հայ-իրանական վեպի ձևավորման ժամանակաշրջանի մասին տեսակետ է հայտնում ուսումնասիրող Ավ. Շահսուվարյան իր՝ «Շահնամեի հայկական աղբյուրները» գրքում: Ըստ Ավ. Շահսուվարյանի, «Ռոստամ Չալը» ստեղծվել է Հայաստանում սելջուկ-թուրքերի արշավանքների շրջանում՝ XI դարի 2-րդ կեսին: Ուսումնասիրողը, ցավոք, փաստեր չի բերում, իսկ այս տեսակետի միակ հիմնավորումն այն է, որ «գաղափարական այդ սուր պայքարում նվաճված ժողովուրդներն ամենից շատ ոգևորվում են իրանական հերոս Ռոստամով, որը ըստ իրանական Էպոսի, առաջինն արևելքում իր սուրն է բարձրացրել թուրք-սելջուկ ցեղերի դեմ»¹: Սա իհարկե բավարար չէ հայ-իրանական վեպի ձևավորման ժամանակը ճշգրտելու համար:

«Ռոստամ Չալի» հետ կապված որոշ հարցերի անդրադարձել է նաև Սարգիս Հարությունյանը՝ 1990-ական թվականների սկզբին «Իրան-Նամե» հանդեսում հրապարակված իրանական բանավոր ավանդության, հոգևոր մշակույթի հայ միջնադարյան գրականության ու բանահյուսության մեջ արտացոլումներին նվիրված հոդվածաշարում²: Մասնավորապես հոդվածաշարի ամփոփիչ՝ 6-րդ մասում, Ս. Հարությունյանը՝ խոսելով XIII-XIV դարերի բանաստեղծ Կոստանդին Երզնկացու մի վկայության մասին, առ այն, որ Հայաստանում «ծայնով է ասվել» «Շահնամեն», նշում է, որ X դարից հետո ժողովրդական վիպասանների միջոցով այն ներթափանցել է Հայաստան, իսկ XIII-XIV դարերում լայնորեն տարածվել: Սակայն բուն «Ռոստամ Չալն», ըստ վաստակաշատ բանագետի, ձևավորվել է թերևս XII դարում՝ Ֆիրդուսու պոեմի նմանությամբ ստեղծված, բայց նրանից տարբերվող «Բարզու Նամե» պոեմի հիմքի վրա. «Ավելին, որոշ վիպական մոտիվներ ու դյուցազնական կերպարներ շատ վաղնջական են և հանգում

1 Ավ. Շահսուվարյան, Շահնամեն և հայկական աղբյուրները, Երևան, 1967, էջ 166:

2 Տե՛ս «Իրան-Նամե» հանդես, թիվ 1-7, Երևան, 1993 թ.:

են անգամ հնդիրանական ակունքներին: Իսկ ամբողջությամբ վերառած՝ հայ իրանական այդ վեպը հայկական միջավայրում ենթարկվել է ազատ վերամշակման ժողովրդական բանահյուսության պարզ ու անպաճույճ հնարքներով, որոնք հեռու են Ֆիրդուսու կամ «Բարզու Նամեի» գրական եղանակներից ու հատկանիշներից»¹:

Ըստ այդմ էլ՝ «Ռոստամ Զալի» վերջնական ձևավորման որևէ հստակ ժամանակաշջան առայժմ չենք կարող նշել, քանի որ կենդանի վիպական ավանդության տարերքը, Էպոսների ձևավորման աղբյուրների ու մեխանիզմների բազմազանությունը այդպիսի ճշգրտության հնարավորություն չեն տալիս: Հաշվի առնելով այս վեպի՝ վերևում բերված հիմնական աղբյուրները, մեր միջնադարյան գրականության մեջ արձանագրված տվյալները, կարող ենք միայն ասել, որ իր հիմնական մոտիվաշարով այն Հայաստան է ներթափանցել XI-XII դարերում, որոշակիորեն տեղայնացել XIV դարից հետո և մեծ զարգացում ապրել XVIII-XIX դարերում:

Դ. «Ռոստամ Զալի» ժանրային յուրահատկությունները

Ժանրային ի՞նչ նկարագիր ունի «Ռոստամ Զալը», կարո՞ղ ենք այն Էպոս համարել, գուցե վիպական բանահյուսության մեկ ա՞յլ ժանր է, ո՞ր տիպի և ո՞ր Էպոսները պետք է ընտրենք որպես համեմատության եզր՝ պարսկական, հայկական, թուրքալեզու ժողովուրդների, գրական, թե՞ բանավոր փոխանցված:

Հարցերի ոչ ամբողջական այս շրջանակի քննարկումը առնչվում է որոշակի դժվարությունների հետ, քանի որ «Ռոստամ Զալի» պահպանված ու մեզ հասած տարբերակներն իրենց կերպարային ու մոտիվային, թեմատիկ-գաղափարական բազմազանությամբ, լեզվաոճական տարբերություններով, հաճախ դրվագայնությամբ, դժվարացնում են դրանց քննությունը մեկ ժանրի չափորոշիչների համապատասխանությամբ: Ինչպես տեսանք, «Ռոստամ Զալի» նախորդ ուսումնասիրողները այն անվերապահորեն անվանել են «վեպ», այսինքն՝ Էպոս, սակայն որոշակի ժանրային քննություն չի կատարվել: Մենք կլռացնենք այդ բացը՝ առանձնացնելով հերոսական Էպոսի ժանրին բնորոշ առանձնահատկությունները և գեղարվեստական այլ յուրահատկություններ:

¹ Ս. Հարությունյան, Իրանական հոգևոր մշակույթի արտացոլումները հայ հին ավանդության մեջ, «Իրան-Նամե» հանդես, թիվ 7, Երևան, 1993, էջ 5:

ա) Պատմականություն և ազգային նկարագիր

Ինչպես տեսանք, «Ռոստամ Զալի» մեզ հասած տարբերակները գրեթե զուրկ են ազգային-պատմական նկարագրից, փոքրաթիվ բացառություններով կապված չեն այն ներկայացնող վիպասացի և ունկնդրի աշխարհագրական միջավայրի հետ: Քիչ են նաև ազգագրական իրողությունների ու կենցաղի պատկերները: Այս մասին գրում է դեռևս Գարեգին Հովսեփյանը. «...այստեղ չեն արտահայտված ոչ հայ ժողովրդի կրոնական-դիցաբանական գաղափարները և ոչ սորա հիմք են կազմել նորա անցեալ կեանքը յեղաշրջող պատմական դեպքերը: Նույնիսկ հերոսները դեռ չեն հայացած...»¹: Սակայն նույն ուսումնասիրության մեջ հեղինակը նաև պնդում է, որ ժողովուրդն այն յուրացրել է. «Հայ ժողովուրդի երևակայութիւնն ու ստեղծագործող հոգին իւր դրոշմն է կնքել ծագումով օտար այս վեպի վերայ...»²: Այսինքն՝ կարող ենք ենթադրել, որ այս վեպը յուրացվել է գեղարվեստական առումով, դարձել բանավոր ավանդույթի մաս, սակայն առանց էպոսներին կամ ավանդավեպերին բնորոշ պատմականացման ու տեղայնացման:

Համենայն դեպս, «Ռոստամ Զալի» մեզ հասած պատումները փաստում են տեղային, կենցաղային, պատմական առանձնահատկություններից որոշակի վերացարկվածություն, ինչն էլ ճանապարհ է բացում վիպական մեկ այլ ժանրի՝ հեքիաթի առջև: Պատումները հակվում են դեպի հեքիաթային մոտիվներն ու կերպարները: Դիպաշարի առանցքում ընկած Իրանի ու Թուրանի բախման թեման հայկական միջավայրում զրկված լինելով ազգային հիմքից՝ հիմնականում ձևական բնույթ ունի և գերիշխում են վիպական ընդհանուր, շատ հաճախ հեքիաթային մոտիվները:

բ) Հերոսականություն

Դասական էպոսի ժանրային հիմնական հատկանիշը հերոսականությունն է, որը հաճախ ձևավորվում է ընդհանուր կամ տեղային հայրենասիրական պաթոսի հիման վրա: «Ռոստամ Զալում» ազգային ու պատմական տեղագրության բացակայությամբ, հերոսականությունը ընդհանրական բնույթ ունի: Այն հանգում է էպիկական գաղափարաբանության ընդհանուր սկզբունքների: Չկա գաղափա-

¹ Գ. Վարդ. Յովսեփյան, Նշված. ուսումն., էջ 12, 22:

² Նույն տեղում, 10:

րական միասնություն, հերոսների արարքները պայմանավորված են կա՛մ անձնական շահերով, կա՛մ ֆեոդալական աստիճանակարգության պահանջով:

Վերջին բնութագրիչները բնորոշ են էպիկական աշխարհին: Այս առումով «Ռոստամ Չալը»՝ իր համապատասխան մոտիվներով՝ թագավորի ու իշխանների ընդհարում, նեղացածություն, չմասնակցություն կռիվներին և այլն, նման է եվրոպական էպոսներին, օրինակ իսպանական «Սիդի երգին»: Սակայն այս դեպքում էլ բացակայում է հերոսների վարքը կարգավորող ասպետական վարքականոնը, որը բնորոշ է եվրոպական էպոսներին ու ասպետական երգերին:

Որոշ դեպքերում հերոսների արարքները հիմնավորված չլինելով համապատասխան վարքականոնով, նաև քրիստոնեական աշխարհայացքին բնորոշ բարոյական նորմերով, օրինակ՝ մեր էպոսին բնորոշ թշնամու նկատմամբ հանդուրժողականություն, հասարակ ժողովրդի կամ աշխատանքի նկատմամբ որոշակի վերաբերմունք, վերածվում են ավագակության ու ավարառության, ուղեկցվում պիկարոյական մոտիվների իրացումներով:

գ) Կառուցվածք և կերպարներ

Ի տարբերություն «Սասնա ծռեր» էպոսի տարբերակների, որտեղ ընդունված ու հարաբերականորեն կայուն է կառուցվածքային 1-4 ճյուղ-մաս համակարգը, «Ռոստամ Չալի» պատումների կառուցվածքը բավական տարբեր է, թույլ է միասնությունը առանձին հատվածների միջև: Թեև որոշ տարբերակներում կարելի է հանդիպել հորից-որդի հաջորդականություն՝ Չալ-Ռուստամ-Չոհրաբ, սակայն, ընդհանուր առմամբ, այս ստեղծագործությունը զուրկ է, օրինակ, «Սասնա ծռեր» էպոսին բնորոշ կուռ կառուցվածքից: Կան առանձին հերոսներ, որոնց կյանքի հերոսական մեկ դրվագի շուրջ կառուցվում է պատումը: Սամ, Չալ, Ռոստոմ, Ռոստոմի որդի Սիեր կամ Չոհրաբ կամ Ֆահրամազ, Չոհրաբի որդի Բրզո, Ռուստամի քրոջ որդի Բեժան, Ռոստոմի խորթ եղբայր Կիվի, վերջինիս որդիներ՝ Բիժանգ և Բուրզի, վերջինիս որդի Թեյպուր, Ռուստամի երազատես քույր Բանի, եղբայր՝ Գևի: Կան պատումներ Իրանի թագավորի վեզիրներ Գյուլի և Տյուսի մասին¹:

Որոշ գրառողներ, թերևս պատումների փաստացի վիճակից ել-

¹ Բ.Խալաթեան, Նշվ. ուսումն., էջ 12:

Նելով՝ դրանք բաժանել են թեմատիկ հատվածների ու ենթագլուխների: Օրինակ՝ Սարգիս Հայկունու և Բագրատ Խալաթյանցի գրառած տարբերակները ծավալուն են ու բաժանված են առանձին ենթագլուխների, որոնք որևէ ամբողջական միջադեպ են ամփոփում, ընդ որում կապված ինչպես նույն հերոսի, այնպես էլ տարբեր հերոսների հետ: Ուշ շրջանի պատումներում այդ բաժանումներն արդեն չկան, պատումներն ընկալվում ու ներկայացվում են որպես մեկ ամբողջություն:

Ըստ Բագրատ Խալաթյանցի, հերոսների մասին տարբեր գրույցները սկզբում անջատ են պատմվել, հետո ծուլվել են, վերածվել ամբողջական վեպի, և ժողովուրդը բոլոր հերոսներին Ռոստոմին ազգակից է համարում¹:

Տարբեր են նաև վիպասացների վկայությունները վեպի կառուցվածքի մասին: Այսպես. վիպասաց Մելիք Անտոնյանը վկայում է, որ երկրում՝ Ռշտունիքում, այն պատմել են քրդերն ու հայերը և բաղկացած է եղել 12 պատմությունից, որից ինքը միայն մեկն է հիշել: Այն կոչել են «Ռըստըմ» կամ «Ռըստըմի կոռե Չալ»:

Ընդ որում, տարածված է միջադեպերի կրկնությունը՝ տարբեր հերոսների հետ կապված: Այդպես է մասնավորապես Բ. Խալաթյանցի պատումում: Փոխվում են Ռոստոմի հակառակորդ փախկանները, բայց միջադեպն ամբողջությամբ նույնն է: Այս սկզբունքը ստեղծում է դիպաշարի չիմնավորված երկարածգման տպավորություն, թուլանում է պատումի ուժը, շատ դանդաղ է նախապատրաստվում գլխավոր բախումն ու յուրային հերոսի հաղթանակը: Կառուցվածքային տարտղնվածությունն ու անկայունությունը նպաստում են հեքիաթային մոտիվների ու արտահայտչաձևերի ներթափանցմանը:

Ընդհանրապես, էպիկական աշխարհը բավական խիտ է բնակեցված, ի տարբերություն «Սասնա ծռերի»: Կան նաև էպիկական ու հեքիաթային այլ տարածված կերպարներ ու արարածներ՝ խորհրդատու, օգնական, վրիժառու պառավներ ու ծերունիներ, գրբաց ու երազատես կանայք, դև-պառավներ, դևեր, փախկաններ, եղևիկներ, աղավիսներ, մեկ ձեռք ունեցող հերոս՝ Չոփոյի Եկդաստ, Տայրե Սիմա հավք, Փոլատ դև և այլք: Իրացվում են այս կերպարների համար բնութագրական էպիկական հիպերմոտիվներ ու մոտիվներ:

¹ Նույն տեղում, էջ 9:

դ) Եպիկական մոտիվներ և «Սասնա ծռեր»

«Ռոստամ Չալի» պատումներում, ինչպես տեսանք, իրացվում են Եպոսներին, նաև ժողովրդական հեքիաթներին բնորոշ բազմաթիվ մոտիվներ: Օրինակ, յուրային հերոսների ընդհարում, կռիվ-մենամարտ, գինավառություն և գենքերի նկարագրություն, հերոսի նեղացածություն, որդիներին ապարանջան թողնել, որսորդություն, հերոսը և հարկահանները, խոսող, հերոսին օգնող ձի, հերոսների արագ հասունացում¹, հոր ու որդու կռիվ՝ Ռուստամ և Մհեր², 40 գազ խորությամբ հորեր, կնոջ մագերով հորից դուրս գալ, երագ, ծովից ձիեր գտնել, հերոսների շատակերություն, գուշակություն աստղերով, կռիվ դևերի հետ (սև, սպիտակ), երեխաներին վնասելու մոտիվ, դևը և հերոսի մայրը, Սև սար գնալու արգելք³, հերոսների ուժի փորձություն, ձիու ընտրություն⁴ և այլն:

Թվարկված մոտիվներից շատերը հանդիպում են նաև մեր Եպոսում, սակայն առանձին խումբ են կազմում այն մոտիվները, որոնք իրացվում են միայն «Սասնա ծռերում»: Օրինակ, ատամները թշնամու ճակատին շարելը⁵, թշնամու վրանների քանակի չափումը երկնքի աստղերով⁶, ձեռքի ափի մեջ արյուն, հերոսի ուժեղ ձայն⁷, հարվածների հերթ մենամարտի ժամանակ, հարկահանություն, հերոսների բարձր ձայն, ծանրություն, հողի մեջ խրվել, թշնամուն մեջտեղից կիսել և այլն⁸:

«Սասնա ծռերի» հետ ունեցած առնչությունները պատումներում տարբեր կերպ են արտահայտվում և տարբեր պատճառներ ունեն: Հիմնական պատճառն, այն է, որ, ինչպես տեսանք վերևում, ասացողների մեծ մասը գիտի նաև «Սասնա ծռերը»: Օրինակ՝ Սարգիս Հայկունու գրառած պատումներից մեկը՝ «Սամ» անունով, պատմել է մոկացի Սախոն: Գրառողն էլ վկայում է՝ «Սանասար-Բաղդասար պատմող Սախո», իսկ ըստ վիպասացի՝ այս պատմությունը «Դավթի ճյուղերից է»⁹: Թերևս սա է պատճառը, որ այս պատումում շատ

1 Տե՛ս Հայ-քրդական վեպեր:

2 Տե՛ս Ռոստամ Չալ (գրառ.՝ **Գ. վարդ. Յովսեփեան**); Հայ-քրդական վեպեր:

3 Տե՛ս Հայ-քրդական վեպեր, մաս 3:

4 Տե՛ս Ռոստամ Չալ (գրառ.՝ **Գ. վարդ. Յովսեփեան**), մաս Ա:

5 Նույն տեղում; **Բ. Խալաթեանց**, մաս Գ:

6 Տե՛ս Ռոստամ Չալ (գրառ.՝ **Գ. վարդ. Յովսեփեան**), մաս Ա:

7 Տե՛ս Ռուստամ Չալ (գրառ.՝ **Ե. Լալայեան**):

8 **Բ. Խալաթեանց**, մաս Բ, Գ:

9 Մոկացի Սախոյի պատմած «Սանասար և Բաղդասար» պատումը, գրառված 1901 թվականին, տե՛ս Սասնա ծռեր 1936, Է:

են Էպոսի հետ ընդհանուր մոտիվները, որոնք սակայն չեն առանձնանում, այլ իրացվում են իրենց տեղում դիպաշարի ընդհանուր տրամաբանությանը համապատասխան: Օրինակ, ինչպես Էպոսում, տարբերակվում են կռապաշտ ու խաչապաշտ թագավորներ: Սամ անունով հերոսը խաչապաշտ թագավորի որդի է, թեև «Շահնամեում» նա Չալի հայրն է, Ռուստամի պապը: Իրացվում են նաև Էպոսից ծանոթ անսանձ ծիուն սանձելու, հերոսի բարձր ծայնի, դև-պառավների հետ հանդիպման, վիշապին մեջտեղից կիսելու, հերոսի պողպատե կոշիկների և այլն մոտիվներ:

Կամ հանդիպում են «խացն ի գինին, տեր կենդանին», «Մենք խաբար որտեղեն տանք» բանաձևերը, աղջկա գեղեցկության Էպիկական նկարագրությունը՝ «արեգական կըսայ՝ դու դուս մի՛ Էլի, ես գեղիմ. ճրագի պես լոյս կուտայ. ջուր կ'իմայ՝ գունդ գունդ բողգեն կերեայ: Չուտես, չ'իմես, օխտս օր գիշեր ցերեկ էդ աղջկայ մահջամալին, բոյ բուսաթին թամաշայ էնես»¹:

Ս. Հայկունու գրառած մեկ այլ պատումում, որի ասացող Պետրոս Վերտոյանի անունով մեզ «Սասնա ծռերի» պատում չի հասել, գրառողը վկայում է, որ ասացողը շփոթում է Ռուստամին Դավթի հետ: Սրա հետևանքով Ռուստամի որդու անունը Միեր է, և իրացվում են մեր Էպոսին բնորոշ մոտիվներ՝ հերոսի արագ հասունացում, երեխաների վնասում խաղի ժամանակ, «բիճ» անվանարկում, կռիվ հոր հետ, սակայն բարեհաջող ավարտով²:

Կամ նույն գրառողի՝ ասացող Դավո Մուխսի Հարությունյանից գրառած «Ըռոստամի Չալ» պատումն իր բովանդակությամբ շատ նման է Ա. Աբեղյանի գրառած «Սասնայ ծռեր» պատումին³:

Նույն կերպ Բագրատ Խալաթյանից՝ Բարսեղ Հարությունյանից գրառած պատումներից մեկում գործողությունները ծավալվում են Սասունում, որի թագավորը Չալն է, վերջինիս եղբայրը՝ Դավիթը, որի որդին է Բուրգեն, իսկ հորեղբայրը՝ Հովանը: Վիպասացը նշում է, որ իրանցի հերոսները, մասնավորապես Ռուստամը, ծուռ են, օրինակ, երբ Ռուստամը նետով սպանում է Կղեյուն փահլևանի ղնգեղջյուրին:

Ըստ Բ.Խալաթյանի, ասացող Մուրադ Մխիթարյանը հերոսներ-

1 Բ. Խալաթյան, նշվ. ուսումն, մաս Ը, էջ 39:

2 Տե՛ս Հայ-քրդական վեպեր:

3 Սասնայ ծռեր (գրառ. Ա.Աբեղյան), «Ազգագրական հանդես», 1902, № 9, Թիֆլիս, էջ 117-143:

րի ցեղը սերված է համարում Միեդից, որին հաջորդում է Նրա որդի Ռուստամի Չալը¹: Այս է պատճառը, որ Բ. Խալաթյանը նշում է. «Հայ դիւցազնական վէպն ամբողջապէս կրում է պարսից ազդեցութեան հետքերն. նոյն են կռուի ձեւերն, զէնքերն, ծառը արմատահան անելն, հորի մէջ մնալն, դէտրի հետ ճակատելն, հօր եւ որդու կռիւն եւ այլն, եւ այլն»²:

Սա Էպոսի հետ ուղղակի զուգորդման, Սասունում արհեստական տեղայնացման փորձ է, ինչի ապացույցն այն է, որ Դավիթը շուտ մահանում է և գործողություններին չի մասնակցում:

Այս երևույթը, ինչպես տեսանք, նախորդ ուսումնասիրողների կողմից մեկնաբանվում է որպէս վեպերի սիրելի հերոսներին ազգակիցներ դարձնելու ժողովրդական բանարվեստին բնորոշ հատկություն: Սակայն ուսումնասիրելով պատումները, կարող ենք տեսնել, որ բացի «Սասնա ծռերի» կերպարների հիշատակությունը, որոշ մոտիվների ու արտահայտչամիջոցների համատեղ կիրառությունները, այս վեպերը ինքնուրույն ստեղծագործություններ են: Բացառությամբ «Ռուստամ Չալի» այն պատումների, որտեղ հերոսները գործում են Սասունում կամ ազգակից են միմյանց, մյուս պատումներով Էպոսի վայրեր ու հերոսներ չեն հիշատակվում: Այս դեպքում ակնհայտ է մեր ազգային Էպոսի զորեղ ազդեցությունը «Ռուստամ Չալի» որոշ պատումների վրա: Իսկ մյուս պատումների դեպքում, չհաշված առանձին, երբեմն մեծաթիվ մոտիվները, «Ռուստամ Չալը» սնվում է ընդհանուր Եփիկական մոտիվներից:

ե) Առասպելահեքիաթային մոտիվներ

Վերևում բերված Եփիկական մոտիվներին զուգահեռ նույն տարբերակներում հաճախ իրացվում են հեքիաթային մոտիվներ ու բանաձևեր: Մոտիվների «հեքիաթային» բնութագրում, չի նշանակում, որ դրանք սերում են հեքիաթներից և որոշակիորեն պայմանական է: «Հեքիաթային» ասելով մենք հասկանում ենք, որ այն ժամանակ, երբ գրառվել են պատումները, դրանք մեծ մասամբ իրացվում էին հեքիաթներում: Թեև նույն ժամանակ կարող են հանդիպել նաև «Սասնա ծռեր» Էպոսում, ժողովրդական ավանդություններում, զրույցներում և այլուր: Այդպիսի մոտիվներ են, օրինակ, քաղաքը 7 տարի պաշարած

1 Բ.Խալաթյանը, էջ 9:

2 Նույն տեղում, էջ 13:

վիշապի դեմ կռիվը, որսի ժամանակ եղևիկների հետ հանդիպումը, կերպարանափոխությունը դերվիշի, աղավախների կերպարանափոխություն աղջիկների և այլն: Կամ պատումն ավարտվում է 7 օր, 7 գիշեր հարսանիքի և երկնքից ընկնող երեք խնձորների հեքիաթային բանաձևերով¹:

Կան գեղարվեստական աշխարհի ժամանակային կազմակերպման հեքիաթային ձևեր, օրինակ՝ «հերոսին թողնենք այստեղ, գնանք տեսնենք մյուսներն ինչ եղան»: Կամ այլ բանաձևեր ու գեղարվեստական արտահայտչամիջոցներ՝ «Հավքն իր թևով, օձն իր պորտով», «Ինչ ես, կորցրել, չես կարողանում գտնել», «Քաղաք, հերոս...ուր ես, ես եկա քեզ մոտ...»: Կիրառվում են հեքիաթային թվեր՝ 7, 40, եռակի գործողության սկզբունքը և այլն: Ասացողները, օրինակ, Պատուր Պողոսյանը, ինչպես և Էպոսի դեպքում այն հեքիաթ են համարում: Ինչպես տեսանք վերևում, «Ռոստամ Չալի» առաջին գրառող Գ. Սրվանձտյանցը նույնպես:

Բ. Խալաթյանցի գրառած Ը պատումում գործող անձեր են Սասուն մա թագավոր Չալի երագատես աղջիկն ու իմաստուն խորհրդատուն Չմրուկ Ղուշը: Այս հրաշալի թռչունը հայկական ժողովրդական հեքիաթների սիրված կերպար, թեև պետք է հիշել նաև, որ նա գործում է նաև Ֆիրդուսու «Շահնամե» պոեմում:

Վերևում բերված վիպական շատ մոտիվներ առասպելական գուգահեռների հնարավորություն են տալիս: Ի թիվս այլ առասպելությունների, կարելի է նշել հնդեվրոպական «հիմք» առասպելի հետ ուղղակի ընդհանրություններ: Օրինակ՝ Ե. Լալայանի ու Բ. Խալաթյանցի գրառած պատումներում իրացվում է փչակում պահվող դևի կամ նրա հոգու մոտիվը: Կամ նույն Ե. Լալայանի պատումում հանդիպում է հավքի ձագերն ուտող վիշապի ու վիշապամարտիկ հերոսի առասպելը՝ ծավալուն նկարագրությամբ:

«Չալին մե ղուշ ուներ, անունը Տայրե-Սիմա էր (Սիմա թռչուն), Ետոնք էդ ղշին շուտով լաւութեն ին արած-ի՞նչպես թէ լաւութեն արած.-Ետ ղուշը, որ ձաք կիսաներ, մե վիշապ օձ կլներ ծառի գլխը Ետու ձաքերը կուտեր, Ետի կմներ շիւար: Ետ Չալի ազգերեն մեկը կպատահի Ետ ծառի տակը, գիչնի Ետե, որ դինջանայ, մեկ էլ կտենայ, որ վժվժոց Էկաւ, Ելըվեր կյիրիշկայ՝ որ մե օձ փաթըթվեր ա ծառը, որ ղշի ձագերն ուտայ: Ետ մարդը շիտկըուաւ տեսաւ, որ օձն հլնում ա, թրով

¹ Հայ-քրդական վեպեր, էջ 53-60:

զանեց, օձը ըսպանեց: Էկաւ պարկաւ Էլի քնաւ: Ղուշն Էկաւ տեսաւ, որ մէ մարդ ծառի տակը պարկեր ա, միտք արաւ, ասաւ. հըմմեն տարի իմ ձագերն ես ա ուտում, բարցրանամ, ըստուն ճանգերով բռնեմ, թողեմ հլիի հագար կտոր: Ձագերը յիմցան, մօրը խասկցրին, ասին. Էտուն վնաս մի տայ, մեր ազատողն էտ ա: Էտա օձն էր ուզում մեզի ուտեր, Էտի զանեց ըսպանեց: Որ ղուշն իմցաւ, յիշաւ, թւերը բռնեց հով անի տղի վրէն, որ քնի»¹:

Կարելի է ենթադրել, որ առասպելական այս մոտիվները մեծ մասամբ գալիս են պարսկական վիպական ավանդությունից, սակայն տարածված են եղել նաև հայ վիպական բանահյուսության մեջ: Կրկին շատ դժվար է աշխատանքի այս փուլում ճշտել դրանց հստակ ծագումնաբանությունը և վաղեմությունը: Առասպելական մոտիվների հետագա առանձնացումն ու ուսումնասիրությունը, թերևս հնարավորություն կտա լույս սփռել այս հարցերի վրա:

Եզրակացություններ

Տարածման ու տեղայնացման առանձնահատկությունները, ընդհանուր մոտիվները, գեղարվեստական արտահայտչամիջոցները մատնանշում են «Ռուստամ Չալի» հարազատությունը մեր վիպական ավանդությանը, հատկապես «Սասնա ծռեր» էպոսին ու ժողովրդական հեքիաթներին: Ընդ որում, այդ հարազատությունը նույնիսկ ավելի մեծ է, քան հենց ենթադրյալ սկզբնաղբյուրի՝ «Շահնամեի» հետ ունեցած կապերը: Միաժամանակ, մոտիվային ընդհանրությունները, դասական էպոսի ժանրային բնութագրումներին որոշ անհամապատասխանությունը դժվարացնում են այս ստեղծագործության վերջնական սահմանումը որպես էպոս, օրինակ՝ հենց նույն «Սասնա ծռերի» հետ համեմատությամբ: Այս տեսանկյունից, ըստ իս, այդքան էլ ճշգրիտ չէ այս ստեղծագործության «վեպ» ժանրանվանումը, քանի որ այս անվանման մատենագրական կիրառություններում ու դրանց վրա հիմնված բանագիտական ուսումնասիրություններում ընդգծվում է ստեղծագործության որոշակի պատմականությունը:

«Ռուստամ Չալը» ժանրային առումով, թեև դասական հերոսական էպոս չենք կարող համարել, սակայն իր առանձնահատկություններով այն, այդուհանդերձ, տատանվում է առասպելախառն էպոսի

¹ Ռուստամ Չալ (գրառ. Ե. Լալայեան), էջ 77:

ու ոյրուցազնական հեքիաթի միջև՝ արևելյան, բանավոր էպոսին բնորոշ տարրերով:

«Ռոստամ Չալի» բնագրերի պատրաստումը, գիտական ժողովածուի հրատարակությունն ու հետագա ուսումնասիրությունները հնարավորություն կտան էլ ավելի մանրամասնությամբ ու հիմնավորվածությամբ քննելու մեր՝ վերևում բերված հարցերը:

Հայկ Համբարձումյան - գիտական հետաքրքրությունների շրջանակը հայ նոր գրականության պատմության, բանահյուսության և քննադատության հարցադրումներն են: Հեղինակ է մի քանի տասնյակ գիտական հոդվածների և մենագրությունների:

АЙК АМБАРЦУМЯН: - ВАРИАНТЫ И ЖАНРОВЫЕ ОСОБЕННОСТИ АРМЯНО-ИРАНСКОГО ЭПОСА «РОСТАМ ЗАЛ» - В статье представлена история записей, публикации и исследования вариантов армяно-иранского эпоса «Ростам Зал». Также обозначены ареалы и пути распространения эпоса. Анализируются жанровые особенности эпоса «Ростам Зал». Выделяются и обсуждаются жанровые признаки классического эпоса и их соотносимость к эпосу «Ростам Зал». В частности, национально-исторический фон, характер героизма, структурная целостность и идеологическое единство отдельных частей.

Основные мотивы эпоса «Ростам Зал» сравниваются с соответствующими мотивами Армянского народного эпоса «Сасна Црер» и народных сказок. Обсуждается характер общностей, и возможные взаимодействия. Частично рассматриваются мифологические мотивы и вопрос их связей с индоевропейской мифологией.

Ключевые слова: *Ростам Зал; Зохраб; Шахнаме; Эпическая традиция; Сасункие Удальцы, Давид Сасунский, структура эпоса, вариант, миф, Армянский эпос; сказка*

HAYK HAMBARDZUMYAN - THE VARIANTS AND GENRE FEATURES OF THE ARMENIAN-IRANIAN EPIC “ROSTAM ZAL” - The article presents the history of the recording, publication and research of variants of the Armenian-Iranian epic “Rostam Zal”. Also described arials and ways of spreading the epic.

Analyzed the genre features of “Rostam Zal”. The genre features of the classic epic and their relevance to the “Rostam Zal” epic are highlighted and discussed. In particular, the national historical background, the nature of heroism, structural integrity and ideological unity of the separate parts.

The main motifs of the epic “Rostam Zal” are compared with the similar motifs of the Armenian folk epic “Sasna Tsrer” and fairy tales. The nature of the commonalities and possible influences are also discussed. Mythological motives and the question of their links with Indo-European mythology are partially considered.

Keywords: *Rostam Zal, Rustam Zal, Zohrab; Shahnameh; Epic tradition; variants, myth, Armenian epic; Daredevils of Sassoun; fairy tale*

REFERENCES

- G. Vard. Srvandzteanc, Hamov-hotov, K. Polis, 1884, (in Armenian).
 B. Khalateanc, Irani herosnery hay joghovrdi mej, Ejmiacin, 1901 (in Armenian).